ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հուլիսի 03-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 01-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 03-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված 27.06.2019 թվականի «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝ Մաս Ի-ի, «Հրավերի պազաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը» 3-րդ կետի պահանջների համաձայն խնդրում ենք պարզաբանել, ինչու է արխիվացման ծառայությունների մատուցման համար սահմանվել խիստ կարճ՝ 20 օրացուցային օր՝ առավել ևս, եթե հաշվի առնենք, որ ծառայությունները պետք է մատուցվեն թվով 9 տարբեր հասցեներում:

Ցանկանում եմ նշել նաև, որ օրինակ՝ ՀՀ պետական եկամուտների կոմտեի համանման ծառայության մատուցման համար սահմանվել էր 90 աշխատանքային օր:»

Պարզաբանում

«Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվել է՝ ելնելով գնման անհրաժեշտությունից՝ պահպանելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1)-ին մասի ը. ենթակետով սահմանված պահանջները:»

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: